

ԳՏՉԱՎԱՆՔԻ ԵՒ ԴԻՉԱԿ ԳԱԻԱՌԻ ՁԵՌԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ

ԹԱՄԱՐԱ ՄԻՆԱՍԵԱՆ
minasyan.tamara64@mail.ru

Պատմական Դիզակ Գաւառը կազմաւորուել է ԺՁ. դարավերջին՝ Արցախ աշխարհի Միւս Հաբանդ Գաւառի հարաւային մասում: Արեւելքում նրա սահմանները ձգուում էին մինչեւ Մուղանի Դաշտ, հիւսիսում՝ Քեօնդական Գետի ձախ ափը, արեւմուտքում հասնում Քիրսի Լեռնաշղթային եւ նրանից դէպի Երասխի Հովիտը ձգուող բարձրութիւններին, հարաւում՝ Երասխ Գետին: Գաւառը համապատասխանում է պատմական այն տարածքին, որ պատմահայր Մովսէս Խորենացին անուանում է Պարզկանք¹, ձեռագրերում կոչուում է Բազկանք կամ Պանծկանք, աւելին ուշ՝ Ջաբրայէլ²:

Դիզակի կենտրոնն է Գոչավանքը: Այն հիմնադրուել է վաղ միջնադարում, իսկ ԺԵ. դարում արդէն յայտնի մշակութային կենտրոն էր եւ ունէր իր գրչատունը:

Ցաօք, Դիզակի գրչութեան կենտրոնի վերաբերեալ տեղեկութիւնները սուղ են. ձեռագրերի մեծ մասը ոչնչացուել է անբաժնութիւնների եւ կողոպուտների հետեւանքով:

Մեր որոնումները (հիմնուած Մաշտոցեան Մատենադարանում (ՄՄ) պահուող համապատասխան ձեռագրերի, Սփիւռքի եւ արտերկրի մատենադարանների ձեռագրացուցակների նկարագրութիւնների, ինչպէս եւ համապատասխան գիտական գրականութեան մէջ այդ գաւառի ձեռագրերին վերաբերող նիւթերի հիման վրայ) այս գրչութեան կենտրոնի վերաբերեալ ի յայտ բերեցին սակաւաթիւ գրչագիր մատենաներ, որոնք հիմնականում գործնական նպատակներով եւ ծիսական արարողութիւնների համար գրուած ձեռագրեր են՝ Աւետարաններ, *Մաշտոց, Շարակնոց*: Նկարագարդման արուեստով նաեւ այս ձեռագրերը առանձնապէս աչքի չեն ընկնում: Ձեռագիր յիշատակարանները տեղեկացնում են, որ ձեռագրեր են գրուել, նկարագարդուել եւ պահպանուել հիմնականում Գոչավանքում, սակաւ թուով՝ Թաղասեռում, Հաղրութի Շախկախ Գիւղում, Դիզափայտում, Տող եւ Թաղլար գիւղերում:

Ա. ԳՏՉԱՎԱՆՔԻ ՁԵՌԱԳՐԵՐԸ

Ձեռագիր Ա1

Դիզակ Գաւառում գրչութեան կենտրոնի մասին վկայող ամենավաղ տեղեկութիւնները 1428ից են: Մի կորած ձեռագրի յիշատակարանից տեղեկանում ենք, որ «*դառն ու անբարի ժամանակներուս*», Ամարասի ե-

պիսկոպոս Մանուէլ գրիչն ընդօրինակում է մի Աւետարան Ասադի որդի Մելքիսէդ արեղայի խնդրանքով՝ որպէս յիշատակ նրա ծնողների, եղբայրների եւ ազգակից-մերձաւորների. «*Գրեցաւ Աւետարանս ի թուին Հայոց ՊՀԷ [1428] ձեռամբ մեղապարտ տէր Մանուէլի ի վիճակս Ամարասայ՝ ի վանքս Քթիսոյ՝ ի դառն եւ անբարի ժամանակիս, որ Թորգոմացի ազգն տիրեն աշխարհի եւ ամենեքեան ի մեծ վշտի կան*»: Գլխաւոր յիշատակարանում գրիչը խնդրում է յիշել իրեն, իր ծնողներին եւ «*զամենայն երախտաւորս ի յաշխարհի*», իսկ ստացողի անունից գրած յիշատակարանում նգովում է բոլոր նրանց, ովքեր կը յանդգնեն կտրել յիշատակարանը³:

Ձեռագիր Ա2

Նոյն թուականից Մանուէլի ձեռքով գրուած ու մեզ հասած եւս մի գրչագիր Աւետարան ունենք, որն այժմ պահուում է ՄՄ՝ 8211 թուահամարի տակ⁴: Ձեռագիրն ունի չորս աւետարանիչների պատկերներ, անուանաթերթեր՝ վերելում թոշունների պատկերներով կիսախորաններ, 176բ թերթի լուսանցքում Գաբրիէլ հրեշտակապետի պատկերն է, ունի նաեւ բազմաթիւ լուսանցազարդեր ու զարդագրեր: Ծաղկողի անունը չի նշում, հաւանաբար գրիչն է: Ձեռագիրը գրուել է Յովհաննէսի կաթողիկոսութեան եւ Իսկանդարի, «*որ է թորգոմածին եւ չարչարող քրիստոնէից*», բռնակալութեան տարիներին:

Ձալալ իշխանի որդի Յովհաննէսը երկար տարիներ եղել է Ադուանից կաթողիկոս: Վերոնշեալ ձեռագիրն արժեւորում է նրանով, որ յիշատակարանում առաջին անգամ արձանագրուած է Յովհաննէսի հայրապետութիւնը. «*Գրեցաւ աստուածագիծ սուրբ Աւետարանս ձեռամբ ոզնամեղ եւ ապիկար գրչի՝ տէր Մանուէլի՝ ի թուականութեանս Հայոց ՊՀԷ (1428)՝ ի յաշխարհս Ադուանից՝ ի վիճակս Ամարասայ՝ ի գեղս Շուշու կոչեցեալ՝ ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս՝ ի կաթողիկոսութեան տէր Յոհաննիսի*»⁵: Յետագայի գրիչներն արդէն յիշում են նրա կաթողիկոսութեան տարիները՝ 1456, 1464, 1466, 1467, 1468ին⁶: Իսկ համաձայն Ս. Յակոբայ վանքի՝ Յովհաննէս հայրապետի տապանագրի, նա մահացել է 1470ին՝ «*Այս է հանգիստ տէր Ուհանէս կաթողիկոս Ադուանից թւ. ՋԺԹ (1470)*»⁷:

Ձեռագրի յետագայի յիշատակարանից երելում է, որ այն Մանուէլի ընդօրինակած վերջին մատեանն է: Երբ վախճանուել է մեծ սէր ու յարգանք վայելող գրիչը, նրա չորս եղբայրները՝ իբրեւ ժառանգութիւն, բաժանել են նրա գրուածքները: Ամարասի Ալեքսիանոս եպիսկոպոսին՝ Մանուէլի եղբորորդուն, որպէս յիշատակ բաժին է ընկել այս ձեռագիրը:

Երկու դար յետոյ՝ 1634ին, Յովհաննէս եպիսկոպոսը, որը նոյնպէս Մանուէլ գրչի տոհմից էր, Դիզակի Գաւառի Թաղասեռ Գիւղի Ս. Սարգիս

եկեղեցում մահտեսի Կիրակոսին նորոգել է տալիս *Աւետարանը*՝ որպէս յիշատակ իրեն, հօրեղբայրներին եւ բոլոր մերձաւոր բարեկամներին՝ Մանուէլ, Ալեքսիանոս, Մարտիրոս, Գրիգոր եպիսկոպոսներին, Յովհաննէս եւ Մարտիրոս արեղաներին, Սարգիս երէցին, Տէր Թորոսին, իր պապ Յովհաննէսին, հօրը՝ Մարտիրոսին, մօրը՝ Մարգարիտին եւ եղբորը՝ Յովանին⁸:

Ձեռագիր Ա3

ՄՄ 9792 ձեռագիրը գրուել է 1477ին Ամարասի Ոմաւանս անապատում՝ ձեռամբ կուսակրօն արեղայ Տէր Զաքարիայի⁹: Գլխաւոր յիշատակարանից տեղեկանում ենք, որ այս տարիներին անապատում գրչութեան արուեստ էր ուսուցանում Տէր Բարսեղը, ում աշակերտել է Զաքարիան: Գրիչը երախտագիտութեամբ է յիշում իր ուսուցչին, ինչպէս նաեւ Ամարասի արքեպիսկոպոս Տէր Ալեքսիանոսին, որին անուանում է երախտաւոր այր: Խնդրում է յիշել նաեւ իր ծնողներին¹⁰:

Նոյն թուականին ձեռագիրն իր «*հալալ ընչից եւ աշխատանաց*» Զաքարիայից գնել է Ալեքսիանոս արքեպիսկոպոսը, բերել Գտչավանք եւ գրել տուել ստացողի իր յիշատակարանը, որտեղ խնդրում է յիշել իր ծնողներին՝ հօրը՝ Ճանագիզային, մօրը՝ Սուլթանային, եղբորը՝ Կոստանդիանոսին, հօրեղբորը՝ Ամարասի Մանուէլ եպիսկոպոսին, նորաբողոք քահանայ Գրիգորիսին եւ բոլոր մերձաւորներին¹¹:

Ալեքսիանոսը մեծ ցաւ է ապրում երկրում տիրող ծանր իրավիճակից եւ խնդրում է չմոռանալ նաեւ իրեն ու իր եղբորը, որ «*միաբանեցաք եւ եկաք ի Քթիշոյ վանքս, զի Թուրք ազգս բազմացեալ է եւ Հայս նուազեալ, եւ չարիքը շատացեալ, եւ մեր յոյսն Քրիստոս է, զի պանդխտինք ի միասին սակաւ աւուրցաք*»¹²: Վերջում Ալեքսիանոսը մեղքերի թողութիւն է հայցում եւ անիծում յիշատակարանը կտրողին:

Ալեքսիանոս արքեպիսկոպոսի յիշատակարանը պարունակում է պատմական փաստեր նաեւ Վրաստանի վերաբերեալ: Ականատեսի իրաւունքով յիշատակագիրը դառնացած գրում է այդ խռովայոյզ ու դաժան օրերի մասին, թէ ինչպիսի մեծ կորուստներ ունեցաւ Հայաստանի հարեւան երկիրը, որոնց պատճառը Ուզուն Հասանի գործած աւերածութիւններն էին: Իրականութիւնն այնքան սահմոկեցուցիչ է, որ գրիչը բառեր չի գտնում որակելու տեղի ունեցածը. Ուզուն Հասանը աւերել է ամէն ինչ, մարդկանց կոտորել է, մեծ ու փոքր, երէց, սարկաւազ ու աշխարհական, այր ու կին, դուստր ու որդի գերի տարել եւ «*ցան ու ցիր արար աշխարհի, զողբն ու կսկիծն լեզու ոչ կարէ պատմել*»¹³:

Ձեռագիր Ա4

ՄՄ 3701 *Աւետարանը* 1464ին Վայոց Ձորի Էրեբան վանքում մահտեսի Սուրասի եւ նրա կնոջ՝ Դիլշատի խնդրանքով օրինակել է Մա-

դաքիա կրօնաւոր գրիչը՝ «որպէս առաջնորդ հոգոյ իւրոյ եւ պարծանս հաւատոց եւ թողութիւն մեղաց» եւ ի վայելումն Ալեքսիանոսի եւ Մուրատի¹⁴: Ստացողի անունից գրիչը յիշատակարանում խնդրում է յիշել Մուրատին, նրա ծնողներին՝ հօրը՝ Տողտողին, մօրը՝ Ագրումալիքին, նաեւ իր եղբայր Էաւետին եւ քոյր Ազիզին¹⁵:

Ձեռագիրն ընծայուել է Գտչավանքին. «Կամաւն Աստուծոյ եւ՝ Աղաճանս կալայ սուրբ Աւետարանս, տուի Քթիչոյ վանքին, ինձ քառասնից տէր Ալեգասանոս եպիսկոպոսի ձեռաւքն կատարեցինք քառասունքն»¹⁶:

Ձեռագիր Ա5

1575ին՝ «ի դատն եւ ի չար ժամանակի, ի դանութեան շահ Թահմազին՝ ի երկիրս Դիզակ՝ ի գեղս Պայկայթաղ՝ ի վանքս Քթիչոյ Սուրբ Աստուածածինս» Պետրոս կրօնաւորի ձեռամբ Մաշտոց է ընդօրինակուել¹⁷: Ձեռագրի ստացողն է Բէկին, որը պատուիրում է ձեռագիրը եւ գրել տալիս յիշատակարան իր եւ բոլոր հարազատների համար: Գլխաւոր յիշատակարանում գրիչը խնդրում է ուժ ու կարողութիւն՝ սկսած գործն աւարտին հասցնելու համար: Նա խնդրում է յիշել իր ծնողներին՝ Մուրուն եւ Թեգային, եղբայրներին ու քոյրերին, իսկ ստացողի անունից նրա բոլոր հարազատներին՝ ծնողներին, որդիներին, դուստրերին, բոլոր կենդանի եւ հանգուցեալ մերձաւորներին՝ յականէ-յանուանէ նշելով անունները: Գրչի հաղորդածից տեղեկանում ենք նաեւ, որ այս թուականին Գտչավանքի վանահայրը Գալոս եպիսկոպոսն էր¹⁸: ԺԷ. դարում ձեռագիրն ստացել է խոջա Բաբաքը եւ յիշատակարան գրել 189ա էջին:

Ձեռագիր Ա6

Ըստ Հայր Ղեւոնդ Ալիշանի՝ 1653-1675ին Գտչավանքի միաբան է եղել Աղուանից կաթողիկոս Պետրոս Խանձրեցու եղբայր Մատթէոս քահանան, որի համար 1668ին մի Աւետարան է ընդօրինակուել¹⁹:

Ձեռագիր Ա7 եւ Ա8

Գտչավանքում է ապրել ու գործել գրասէր Առաքել վարդապետ Կոստանեանցը: Նա 1853ին նշանակուել է վանքի վանահայր²⁰ եւ երկար տարիներ զբաղուել վանքի կառավարման ու բարեկարգման հարցերով, ինչպէս նաեւ հայոց լեզու եւ կրօն է դասաւանդել, գրել է պատմութիւններ, որոնք հասել են մեզ: ՄՄ 7822²¹ եւ 7823²² ձեռագրերը Առաքել վարդապետի Պատմութիւն Արցախի աշխատութեան երկու հատորներն են, որոնք հեղինակը գրել է 1858-1880ին եւ նուիրել իր հոգեւոր ծնող Յակոբ վարդապետի յիշատակին: Հեղինակն իր մատենում արժէքաւոր աշխարհագրական տեղեկութիւններ է հաղորդում, որով էլ երկը ձեռք է բերում աղբիւրագիտական արժէք եւ, կարելի է ասել, հանդիսանում է Արցախի մասին աշխարհագրական մի ինքնատիպ ձեռնարկ: Չի բացառուում, որ այն ժամանակին գործածուած լինի իբրեւ դասագիրք: Պատմու-

թին Արցախի երկն աղբիւր է եղել Բաֆֆու Խամսայի Մելիքութիւնները աշխատութեան համար: Բաֆֆին գնահատելով Կոստանեանցի երկերի պատմական ու աղբիւրագիտական արժէքը, տեսնում է նաեւ թերութիւնները եւ տեղին դիտողութիւններ է անում²³:

Պատմութիւն Արցախին տեղեկութիւններ է հաղորդում յատկապէս Դիզակի մելիքութեան պատմութիւնից, որը Հայ Ազգագրական Ընկերութեան կողմից առանձին հրատարակուել է «Նիւթեր Հայ Մելիքութեան» մատենաշարով²⁴: Իսկ ժամանակագրական ցուցակը, ինչպէս հեղինակն է հաւաստում, դուրս է բերել Գասպար քահանայի ձեռքով գրուած մի ձեռագիր *Մաշտոցից*: Առաջին հատորի յիշատակարանում (156բ-57ա) Առաքել վարդապետը տալիս է նաեւ ինքնակենսագրական բնոյթի տեղեկութիւններ, խնդրում է յիշել իր ծնողներին՝ հօրը՝ Աւագին, ում կորցրել է մանուկ հասակում, մօրը՝ Մարիամին, ինչպէս նաեւ իր հոգեւոր ծնող ճգնագգեաց Յակոբ վարդապետին, Գտչավանքի միաբաններին, որոնց օգնութեամբ այս գործն աւարտուել է: Գրիչը յատկապէս ակնածանքով է յիշում մօրը, ով քառասունհինգ տարի մնացել է այրի եւ վախճանուել ու թաղուել է Գտչավանքում՝ որդուն թողնելով սուգի եւ տրտմութեան մէջ:

Ձեռագիր Ա9

1884ին Առաքել վարդապետ Կոստանեանցը գրում է Գտչավանքի պատմութիւնը²⁵: Ինչպէս յիշատակարանում խոստովանում է *Պատմութիւնի* հեղինակը, այս երկը լրացումն է նախորդ երկու հատորների. *«Յայսմ հատորի պատմագրութեան ցանկում բովանդակել զայն ամենայն թերութիւնս, որ յետոյ շրջելով ընդ ամենայն անտոնակոյս տեղիս...աստի եւս արտագրեալ զպակասութիւնս անցեալ երկուց հատորոց պատմագրութեանց»*²⁶: Ձեռագիրը կարեւոր տեղեկութիւններ է հաղորդում վանքի միաբանութեան կեանքի մասին: Հեղինակը ներկայացնում է իրեն նախորդած վանահայրերին: Գտչավանքի վանահայրն է եղել Մելիք-Եզանի հայր Ղուկաս վարդապետը, ում յաջորդել է Մեսրոպ եպիսկոպոսը: Նա առաջնորդ է նշանակուել Մելիք-Եզանի կողմից 1723ին եւ շուրջ 25 տարի ղեկավարել վանքի միաբանութիւնը: Մեսրոպ եպիսկոպոսի յաջորդն էր նրա որդի Սիմէոն եպիսկոպոսը, որ *«արիւաջան աշխատասիրութեամբ լուսաւորեաց մեծ իմն պայծառագարդութեամբ զտուրբ վանս եւ վերստին իսկ հաստատեաց զմերձակայ կալուածս...»*²⁷: Վերջինիս էլ յաջորդել է Յովհաննէս վարդապետը: Ապա պատմագիրը ներկայացնում է Տէր Սիմէոն եպիսկոպոսի եւ Յովհաննէս վարդապետի վանահայրութեան տարիների իրադարձութիւնները: Իսկ Մելիք-Եսայու՝ 1781ին սպանուելուց յետոյ միաբանութեան վիճակը սաստիկ վատանում է, վանքը *«սասանօր տկարանայ եւ սկսեալ նուազի*

օրբստօրէ՛», սրան էլ յաջորդում են Ադա Մուհամմադ խանի արշաւանքներինց յետոյ բռնկուած սաստիկ սովն ու մահտարածամը:

Առաքել վարդապետը տեղեկութիւններ է հաղորդում Գոչաւանքի հողային սեփականութեան սահմանների վերաբերեալ, որը հաստատուում է վանքի կալուածքների մասին 1856 Դեկտեմբերի 1ին Ղարաբաղի կոնսիստորիային ուղղուած տեղեկագրով²⁸: Տեղեկութիւններ ենք ստանում նաեւ Մելիք-Եզանեանների մահմեդականացուած ճիւղի մասին. «*Դարձեալ ի դէնս Մահմէտի, այսպէս պնդութեամբ պահեն զօրէնս նորա, կարծեմ թէ Մահմէտն բնաւ չէ այնու հոգուով պահպանեալ, որպէս նոքա կամին զոհել զիրարս եւ զորդիս իւրեանց*»²⁹: Հեղինակը հաղորդում է նաեւ ինքնակենսագրական տեղեկութիւններ: Ձեռագիրը մեզ է աւանդել նաեւ մի գեղեցիկ աւանդագրոյց՝ Անտոն մանկան նահատակութեան պատմութիւնը լենկթեմուրեան ժամանակաշրջանում:

Ձեռագիր Ա10

Գոչաւանքից մեզ հասած յաջորդ մատեանը՝ ՄՄ 3881 ձեռագիրը, դարձեալ Առաքել վարդապետ Կոստանեանցի գրչին է պատկանում. այն պատմական նիւթերի ժողովածու է՝ գրուած 1886-1888ին³⁰: Այստեղ հեղինակը զետեղել է տարաբնոյթ պատմական նիւթեր, տալիս է նաեւ Մելիք-Շահնազարեան տոհմի ժամանակագրութիւնը, հաղորդում է, որ Մելիք-Եսային սպանուել է 1781ին Շուշիի Իբրահիմ խանի կողմից:

Այսպիսով, Դիզակ Գաւառի ձեռագրական ժառանգութեան մէջ նշանակալից տեղ են գրաւում Գոչաւանքում գրուած կամ այս կենտրոնին առնչուող ձեռագրերը:

Բ. ԳԻՒՂ ՏԱՔ

Ձեռագիր Բ1 (11)

Գաւառի այլ վայրերից եւս ունենք մատեաններ, որոնցից մէկն է 1563ին Տաք Գիւղում Յովհաննէս երեցի խնդրանքով Նասիպ սարկաւազի ընդօրինակած *Աւետարանը*³¹: Ձեռագիրն ունի աւետարանիչների պատկերները, կիսախորաններ եւ լուսանցագարդեր: Հայաստանի Կուլտուր-Պատմական Թանգարանի ազգագրական արշաւախումբը *Աւետարանը* ձեռք է բերել իջեանցի Մարտիրոս Բաղդասարեանից եւ մուծել թանգարանի հարուստ հաւաքածուի մէջ (թիւ՝ 1325), իսկ 1938ին բերուել է ՄՄ³²:

Գ. ԳԻՒՂ ԹԱՂԱՍԵՌ

Ձեռագիր Գ1 (12)

Բաղդասար գրիչը 1631ին Դիզակի Թաղասեռում գրել է մի *Մաշտոց*³³: Խոնաւութիւնից գրադաշտը գունափոխուած է: Թթուակեր ու ցեցակեր այս ձեռագիրն ունի մէկ կիսախորան, բազմաթիւ ճակատագարդեր, լուսանցագարդեր, զարդագրեր: Գլխաւոր յիշատակարանում Բաղդասար գրիչը խնդրում է յիշել տէր Մելքեաւթ վարժապետին, իրեն եւ իր

բոլոր մերձաւորներին՝ հօրը, մօրը, որոնց անունները չի տալիս, կողակցին՝ Բեկիին եղբայրներին, մանաւանդ ձեռագրի պատուիրատու Շահաւարին ու նրա կողակցին՝ Հուրիին, միւս եղբօրը՝ Մուլքին, որդիներին՝ Տաւաթարին, Բրթուլին, Պարխուտարին եւ եղբօրորդուն՝ Պետրոս քահանային: Ձեռագրի ստորին լուսանցքներում թողած բազմաթիւ մանր յիշատակարաններից՝ «Վա՛յ գրչիս, զի մեղաւոր է»³⁴, երեսում է, որ դառնացած է գրիչը: Նա քանիցս կրկնում է յայտնի իմաստութիւնը. «Ձեռս զնայ, գիրս մնար»³⁵, «Ձեռս փտի, դառնայ ի հող, գիրս մնայ յիշատակող»³⁶, յետոյ խնդրում «Գծագրողիս, Տէ՛ր, ողորմես»³⁷: ԺԸ. դարում ձեռագիրը նորոգել է Մարդանս դպիրը եւ 172բ էջին թողած յիշատակարանում խնդրել է յիշել իրեն: 1745ին ձեռագիրը պատկանել է Շահնագարի որդի Մելիքսէթին: Երկրորդ ստացողի յիշատակարանը մասամբ եղծուած է, եւ կարդացուող անուններից՝ Շահրիման, Օսէփ, Սարգիս, հասկացում է, որ նրանք նոյնպէս Շահնագարի որդիներն են ու Մելիքսէթի եղբայրները, իսկ Մաշտոցը եղել է նրանց ընտանեկան սրբութիւնը: Դարձեալ յետագայի մէկ այլ յիշատակարան հաղորդում է, որ Տէր Գրիգորը 1783ին ձեռնադրուել է Աբրահամ աստուածաբան վարդապետի ձեռքով: Ձեռագիրը յետոյ գտնուել է գերութեան մէջ: 1791ի Ապրիլի մէկին թիֆլիզեցի նալբանդ Միսոյի որդի Եզխիսեսօն ազատել է գերուած ձեռագիրը եւ որպէս յիշատակ նուիրել Ս. Աստուածածին եկեղեցուն, «որ եւ յիշատակն բարի եղիցի տէր Գրիգորի»³⁸: Ձեռագրի վերջին ստացողն է ազուլեցի Առաքելի որդի Յարութիւնը, ով 1804ին ձեռագիրը գնել է Թիֆլիզում: 100 տարի անց ձեռագիրը բերում է Ս. Էջմիածին:

Ձեռագիր Գ2 (13)

Տէր Յովհաննէսի պատուերով 1638ին Կիրակոս երէցը Մաշտոց է օրինակել՝ «ի երկիրս Աղուանից, ի գաւառս Դիզակ, ի գիւղս Թաղայսեռ՝ ընդ հովանէաւ սուրբ Սարգսի եկեղեցո, ձեռամբ մեղաւոր Կիրակոս անարժան իրիցի, յիշատակ տէր Յովաննէս սրբասնունդ քահանայի եւ ծնողաց //»³⁹: Այստեղ յիշատակարանն ընդհատում է՝ վերջին թերթն ընկած լինելու պատճառով, ուստի այլ տեղեկութիւններ չունենք: Ըստ 182բ էջի յետագայի յիշատակարանից՝ 1906ին ձեռագիրը հաշուուել է Օ. Բարաղամեանի կողմից կազմուած Վասպուրականի ցուցակի մէջ: Այժմ այն պահւում է ՄՄ 5380 թուահամարի տակ⁴⁰:

Ձեռագիր Գ3 (14)

ԺԷ. դարում Թաղասէռում յայտնի գրիչ էր Կիրակոսը, նա ոչ միայն օրինակել է գրչագրեր, այլեւ օգնել է այլոց ձեռագրեր ընդօրինակելու գործում: Կիրակոս քահանան Մելքիսէթ երեցի հետ նոյն եկեղեցում բոլորգիր մի *Աւետարան* է սկսել ու աւարտել⁴¹: Յիշատակարանում Մելքիսէթը Կիրակոսին իր եղբայրն է համարում: Ձեռագիրը չունի գրչութեան

թուական, հաւանաբար գրուել է նախորդ ձեռագրի ստեղծման տարիներին: Այսպէս ենք կարծում, որովհետեւ եւ Մելքիսէթը, եւ Կիրակոսը եղբայրներ ու ժամանակակից լինելուց բացի, գրչութեան տարին եւ տեղը նշում են նոյն բանաձեւով. «*Գրեցաւ Մբ. Աւետարանս ի երկիրս Աղուանից՝ ի գաւառս Դիզակ՝ ի գեաղս, որ կոչի Թաղասառ՝ ի դուռն սուրբ Սարգսի ի Շահ Սեփոյն երրորդ ամի՝ ձեռամբ Մելքիսէթ իրեցու եւ եղբայր իմոյ՝ տէր Կիրակոս քահանայի, որ ի միասին սկսաք եւ աւարտեցաք*»⁴²: Աւետարանը գերի է տարուել Պարսկաստանի Թարիզ քաղաք, որտեղից էլ 1806ին էրզրումցի պարոն Մկրտիչը փրկագնել ու նուիրել է շուշեցի մահտեսի Սրապիոն Շխէեանցին: Ձեռագիրը պահուել է Շուշիի Ս. Ագուլեցոց եկեղեցում, որտեղ էլ այն տեսել եւ յիշատակարանն արտագրել է Մակար Բարխուդարեանը⁴³: Ձեռագրի յետագայ ճակատագիրն անյայտ է:

Ձեռագիր Գ4 եւ Գ5 (15, 16)

Պահպանուած յիշատակարաններից տեղեկանում ենք Թաղասեռում պահուած, բայց առայժմ անյայտ եւս երկու ձեռագրի մասին: 1635ին «*ի գեաղ, որ կոչի Թեղասառ՝ ընդ հովանաւ Մբ. Աստուածածինս*» մի Աւետարան է ընդօրինակուել⁴⁴: Իսկ գիւղի հին եկեղեցում, որ կոչուել է Հին Թաղասեռի եկեղեցի, եղել է անխնամ ու յիշատակարանը գողացուած մի Աւետարան⁴⁵:

Դ. ԳԻԻՂ ԹԱՂԱՐ

Ձեռագիր Դ1 եւ Դ2 (17, 18)

Գասպար քահանան 1834ին այստեղ անվարժ բոլորգրով *Մայր Մաշտոց* է օրինակել: Ձեռագրի ստացողը գրիչն է⁴⁶: Իսկ ՄՄ 2464 *Շարակնոցը* պահուել է Թաղլարում: Գրուել է 1665ին. գրիչը, առաջին ստացողն ու գրչութեան վայրն անյայտ են⁴⁷: Ձեռագիրը թերի է՝ սկզբից եւ վերջից թերթերի ընկած լինելու պատճառով: Երկրորդ ստացողը՝ մեծթաղլարցի ուստա Միրզան, իր «*հալալ վաստակոց*» այլազգիներից գնել է ձեռագիրը՝ ի յիշատակ իրեն եւ ազգականներին: Ստացողը յիշատակում է ծնողներին՝ Գրիգորին ու Խանումին, եղբայրներին՝ Աւաքին, Աղայճանին, Մանին եւ կողակցին՝ Խանպաջուն, որդուն՝ Ռեանին, դստերը՝ Զանանին⁴⁸: Իսկ Մալքումը 1707ին ստացողի անունից յիշատակ է թողել ձեռագրի մի քանի էջերում: Գլխաւոր յիշատակարանում յիշում է, թէ ինչպէս թշնամին մտել է Արցախի գաւառները, կողոպտել, տարել է ամէն ինչ, գերի են տարուել նաեւ ձեռագրերը, կործանուել ու թալանուել են հոգեւոր կենտրոնները. «*Լակզին եկն Կանճայ, Խաչին, Վարանդա, Դուգաղ ամէն եսիր դարաւ Դաղխտան: Եղ նորայ այլազգն զօրացան, երկիր խնկարկեցին, վանք, զանայպատ, եկեղեցիք կօղորդեցին: Զայս*

Շարակնոցս այլագգի ձեռաց գնեցի, որ է Շիրվանդալու»⁴⁹: Բարեբախտաբար, տարիներ յետոյ գտնուել ու փրկուել է այս Շարակնոցը:

Ե. ԳԻՒՂ ՓԱՐԱՋԱՆՑ

Ձեռագիր Ե1 (19)

Դիզակում՝ «ի գեղս, որ կոչի Փարաջանց՝ ի երկիրս Հաքարու՝ ի ոտս Դիզափայտու ի թուին ՌԻԳ [1574]» Աբրահամ արեղան ընդօրինակում է մի *Աւետարան*: Յիշատակարանում գրիչն անափ վշտով գրում է, որ դա Գրիգորիս Աղուանից կաթողիկոսի ուրացութեան տարին է. «Կաթողիկոսութեան Տանս Աղուանից տէր Գրիգորիսի, որ երես Թահեսայմագ փաթշահ անկամա տաջկացուց, մեզ մեծ սուգ եղել անմխիթար»⁵⁰: Մեկրար-Բէկի երկու որդիները՝ Գրիգորիսը եւ Յովհաննէսը, երկար տարիներ գահակալել են Աղուանից կաթողիկոսութիւնը: Ձեռագիր աղբիւրները Գրիգորիսի գահակալութիւնը նշում են 1556ից: Աղբիւրները նշում են նաեւ, որ նա ուրացել է քրիստոնէութիւնը. «Տէր Գրիգոր՝ որդի Մէրամբէկին տեսան Խաչենոյ ՌԵ (1556) թուին եւ սա ուրացաւ զՔրիստոս ՌԻԲ-ին [1573]»⁵¹: Բարխուդարեանցը եւս այս թուականն է ընդունում ուրացութեան տարին. «Գրիգոր կաթողիկոսը 1573ին ուրանում է իւր հաւատը, որին փոխարինում է տէր Դաւիթ Թ Առաջածորցի նոյն իսկ թուին, սակայն խաչենցիք մեզ անյայտ պատճառով խեղդում են՝ կախելով Գանձասարի զանգակատնից»⁵²: Ձեռագիր աղբիւրները չեն խօսում, թէ ինչ պատճառով է Գրիգորիսը ուրացել հաւատը: Միայն Աբրահամ գրիչն է արձանագրում այդ արատաւոր երեւոյթի պատճառը. Գրիգորը պարսկական արքունիքի հարկադրանքով է ընդունել մահմեդականութիւնը: Դա, ըստ Աբրահամ արեղայի, 1574ին էր, իսկ նրան հենց նոյն տարին յաջորդել է Գրիգորիսի եղբոր՝ Բաղդասար-Բէկի որդին՝ Դաւիթը: Սրանից յետոյ ձեռագիր աղբիւրները Գրիգորիսի մասին լռում են:

Զ. ԳԻՒՂ ՇԱՆԿԱՆ

Ձեռագիր Զ1 (20)

Դիզակի Հաղրութի անապատի Շախկախ Գիւղում Յովհաննէս երեցի ինդրանքով 1584ին նոյն Աբրահամ արեղան մէկ այլ *Աւետարան* է օրինակել⁵³: Յիշատակարանում պահպանուել են սակաւ տեղեկութիւններ անապատի միաբանութեան կեանքից: Այս տարիներին ուխտի առաջնորդն էր Յովհաննէս եպիսկոպոսը: Ըստ գրչի՝ ձեռագիրը գրուել է Դաւիթ կաթողիկոսի հայրապետութեան տարիներին: Այստեղ գրչութեան թուականի համապատասխանութեան սխալ կայ, որովհետեւ Դաւիթը, որի մասին խօսուեց վերելում, կաթողիկոս է եղել Գրիգորիսի ուրացութիւնից անմիջապէս յետոյ՝ 1574ին, ընդամենը մէկ տարի եւ նոյն թուականին էլ մահացել անյայտ պայմաններում, ապա նրան յաջորդել է Գրիգորիսի եղբայր Յովհաննէսը, ով աթոռակալել է մինչեւ 1586:

Ձեռագիր 22 (21)

Շախկախում մի *Աւետարան* էլ գրուել է 1673ին «յերկիրս Դիզակու ի գիւղս Դար ընդ հովանեաւ սուրբ եւ նշանաւոր տեղոց, որ կոչի Շախկախ եւ այլ միաբանիցս Յակոբ եպիսկոպոսին եւ տէր Մկրտչին, տէր Բարսղին գրոց աշակերտ Մադաթին»⁵⁴:

Է. ՀԱՂՐՈՒԹ

Ձեռագիր Է1 (22)

Եղիա արեղան, որ 1428ին գործել է Վայոց Ձորի Եղեգիս աւանի Ճգնաւորի Քար անապատում, իր օրինակած բոլորգիր *Աւետարան*ում յայտնում է իր՝ ծագումով հաղորութեցի լինելը. «*Աւարտեցաւ Սուրբ Աւետարանս ձեռամբ յոգնամեղ եւ փցուն գրչի Եղիայի, որ անուամբ կոչեւ արեղայ եւ ոչ գործով, աշխարհաւ յԱղուանից եւ տեղեւ Դիզակցի, եւ գեղաւ Հաղորուղեցի*»⁵⁵: Եղիա գրիչը ինդրում է յիշել հօրը՝ Մեսարին, երբօրը՝ Ձեսարին, ուսուցչին՝ Աթանասին եւ «*զմեղապարտ գրչիս, որ յետ սակաւ ժամանակաց ձեռս իմ հողանայ եւ մաղթանքս իմ առ ձեզ մնայ*»⁵⁶: Ձեռագիրը յետագայում հասել է Ագուլիս, որտեղ էլ այն յայտնաբերել է երեսունեօթ ձեռագրերի յիշատակարանների հետ 1911ին *Արարատ* ամսագրում հրատարակել է Մեսրոպ Մաքսուդեանը⁵⁷: Ո՞վ է ձեռագրի առաջին ստացողը, յայտնի չէ, երկրորդը ագուլիսցի Խաթունբէկն է: Եղծուած յիշատակարանից ենթադրում ենք, որ նա ոմն Գրիգորի կինն է եւ գնել է ձեռագիրը որպէս յիշատակ իրեն, Կարապետ որդուն եւ ծնողներին: Երրորդ ստացողի յիշատակարանը 344ա էջում է, դարձեալ եղծուած է եւ հատուկէնտ բառերից կարդացում են «Ալեքսանոս, Մարտիրոս: //այլ եւ ամուսին իմ Շիրազն, եւ դուստրն իմ Նովի// եւ Մարգարիտն»: Ձեռագիրը գնել է Ռստակէար իր եւ ծնողների յիշատակին:

Այսպիսով՝ կարող ենք ասել, որ Գոչավանքից եւ Դիզակ Գաւառի տարբեր բնակավայրերից մեզ են հասել տարբեր բովանդակութեամբ 22 ձեռագրեր, որոնց յիշատակարանները նաեւ բազմաթիւ ուշագրաւ տեղեկութիւններ են պահպանել գաւառի պատմութեան ու հոգեւոր կեանքի վերաբերեալ:

Ընդհանուր Աղիւսակ Դիզակի Գաւառի Ձեռագրերի

| Ձեռագիր | Գրիչ | Թուակ. | Ստացող | Վայր | Ներկայ Վիճակ |
|----------|---------|--------|----------------|------------------|--------------|
| Աւետարան | Մանուէլ | 1428 | Մելքիսէդ | Գտիչ | կորած |
| Աւետարան | Մանուէլ | 1428 | Ալեքսիանոս (Բ) | գ. Շուշու | ՄՄ8211 |
| Աւետարան | Զաքարիա | 1477 | Ալեքսիանոս | Ոմանանս Գտիչ (Բ) | ՄՄ9792 |
| Աւետարան | Մադաթիա | 1464 | Մուրատ, | Վայոց Ձոր, | ՄՄ3701 |

| | | | | | |
|---------------------------|-------------------------|-----------|---------------------------------------|---------------------------|-------------------------|
| | | | Դիլշատ | Էրերան վանք (Ա), Գտիչ (Բ) | |
| Մաշտոց | Պետրոս | 1575 | Բեկի (Ա), խոջա Բաբաբ (Բ) | գ. Պայկաթաղ | ՄՄ6834 |
| Աւետարան | անյայտ | 1668 | Մատթէոս | Գտիչ | անյայտ |
| Պատմութիւն Արցախի | Առաքել Վրդ. Կոստանեանց | 1858-1868 | | Գտիչ | ՄՄ 7822 |
| Պատմութիւն Արցախի | Առաքել Վրդ. Կոստանեանց | 1870-1880 | | Գտիչ | ՄՄ 7823 |
| «Պատմութիւն Գոչայ Վանուց» | Առաքել Վրդ. Կոստանեանց | 1884 | | Գտիչ | ՄՄ 3966 |
| Ժողովածոյ | Առաքել Վրդ. Կոստանեանց | 1886-1888 | | Գտիչ | ՄՄ 3881 |
| Աւետարան | Նասիպ Սարկաւազ | 1563 | Յովհաննէս Երեց | գ. Տաք | ՄՄ 7571 |
| Մաշտոց | Բաղդասար | 1631 | Մելիքսէթ 1745 (Բ), Յարութիւն 1804 (Գ) | Թաղասեռ | Եղել է գերուած, ՄՄ 3580 |
| Մաշտոց | Կիրակոս Երեց | 1638 | Տէր Յովհաննէս | Թաղասեռ | ՄՄ 5380 |
| Աւետարան | | 1635 | | Թաղասեռ | կորած |
| Աւետարան | | | | Թաղասեռ | կորած |
| Մայր Մաշտոց | Գասպար | 1834 | գրիչ | Թաղլար | անյայտ |
| Շարակնոց | անյայտ (Ա), Մալքում (Բ) | 1665 | Միրզան (Բ) | անյայտ (Ա), Թաղլար (Բ) | ՄՄ 2464 |
| Աւետարան | Աբրահամ Աբդ. | 1574 | | գ. Փարաջանաց | Նոր Ջուղա |
| Աւետարան | Աբրահամ Աբդ. | 1584 | Յովհաննէս Երեց | Շախկախ | Զմմառ |
| Աւետարան | | 1673 | | Շախկախ գ. Դաք | անյայտ |
| Աւետարան | Եղիա Աբդ. | 1428 | անյայտ (Ա), Խաթունբէկ (Բ) | Եղեգիս | |

- ¹ Մովսես Խորենացի, *Աշխարհացոյց*, առաջաբանը եւ քնն. բնագիրը՝ Բ. Յարութինեանի, *Մատենագիրք Հայոց, Հտր. Բ.*, Անթիլիաս, Տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 2003, էջ 2188:
- ² Մակար Բարխուդարեանց, *Արցախ*, Բագու, Տպ. Արօր, 1895, էջ 26. նաև՝ Յ. Ոսկեան, *Արցախի Վանքերը*, Վիեննա, Մխիթարեան Տպարան, 1953, էջ 13:
- ³ Լեւոն Խաչիկեան, *ՏԵ Դարի Հայերէն Ձեռագրերի Յիշատակարաններ*, Հտր. Ա. Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ., 1955, էջ 385:
- ⁴ ՄՄ ձեռ. 8211, թերթ՝ 369, նիւթ՝ թուղթ, 23,5x15,5, գիր՝ բոլորգիր, տող՝ 19:
- ⁵ Նոյն, 359բ-60ա:
- ⁶ Լեւոն Խաչիկեան, *ՏԵ Դարի Հայերէն Ձեռագրերի Յիշատակարաններ*, Հտր. Բ. Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ., 1958, էջ 66, 219, 244, 245, 272. նաև՝ Ոսկեան, էջ 162:
- ⁷ Բարխուդարեանց, *Արցախ*, էջ 171:
- ⁸ Նոյն, էջ 361ա:
- ⁹ ՄՄ ձեռ. 9792, թերթ՝ 335, նիւթ՝ թուղթ, 21,6x16, գիր՝ բոլորգիր, տող՝ 19. նաև Լեւոն Խաչիկեան, *ՏԵ Դարի Հայերէն Ձեռագրերի Յիշատակարաններ*, Հտր. Գ. Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ., 1967, էջ 460:
- ¹⁰ Նոյն, էջ 330բ:
- ¹¹ Նոյն, էջ 331ա:
- ¹² Նոյն, թղ. 331բ:
- ¹³ Նոյն:
- ¹⁴ ՄՄ ձեռ. 3701, թերթ՝ 277, նիւթ՝ թուղթ, 27,5x16,5, գիր՝ բոլորգիր, տող՝ 21:
- ¹⁵ Նոյն, էջ 279ա:
- ¹⁶ Նոյն, թղ. 279բ:
- ¹⁷ ՄՄ ձեռ. 6834, թերթ՝ 189, նիւթ՝ թուղթ, 17,3x13,5, գիր՝ բոլորգիր, տող՝ 17-18:
- ¹⁸ Նոյն, էջ 187բ-189ա:
- ¹⁹ Ղեւոնդ Ալիշան, *Միսական*, Վենետիկ, Սր. Ղազար, 1898, էջ 270:
- ²⁰ ՄՄ, Կաթողիկոսական դիւան, թղթ. 168, լաւ. 41:
- ²¹ ՄՄ ձեռ. 7822, թերթ՝ 161, նիւթ՝ թուղթ, 20,5x17, գիր՝ նոտրգիր, տող՝ 19:
- ²² ՄՄ ձեռ. 7823, թերթ՝ 117, նիւթ՝ թուղթ, 20,5x17, գիր՝ նոտրգիր, տող՝ 15-27:
- ²³ «Առաքել վարդապետը, իրաւ է, իր պատմութեան մէջ ժամանակագրական կարգը չի պահպանել, նիւթերը իրանց տեսակի համեմատ չէ դասաւորել, եւ նրա աշխատութիւնը աւելի մի անկապ հաւաքածու է, քան թէ պատմութիւն, այնուամենայնիւ նրա գրքերը բովանդակում են իրենց մէջ թէեւ անմշակ, բայց բաւական առատ նիւթ պատմութեան համար: Առաքել վարդապետի երկու հատորների մէջ կան եւ այնպիսի գլուխներ, որ կարող են ծառայել իբրեւ աղբիւր Ղարաբաղի մելիքների պատմութեան համար: Իսկ որ ամէնից հետաքրքիր է, դա է մի ժամանակագրական ցուցակ Ղարաբաղի նշանաւոր անգրքերի մասին, սկսեալ 1721 թուականից մինչև 1813 թուականը» (Ըաֆֆի, *Խամսայի Մելիքութիւնները, Երկերի Ժողովածու*, Հտր. Գ. Երեւան, Սովետական Գրող, 1987, էջ 609-610:

- ²⁴ Ա. Կոստանեանց, *Դիզակի Մելիքութիւնը, Նիւթեր Հայ Մելիքութեան Մասին, Պրակ Ա.*, Վաղարշապատ, Տպ. Մայր աթոռ Սբ. Էջմիածնի, 1913:
- ²⁵ ՄՄ ձեռ. 3966, թերթ՝ 11, նիւթ՝ թուղթ, 22,5x18, գիր՝ նոտրգիր, տող՝ 20-27: Երկը «Պատմութիւն Գոչայ Վանուց» վերնագրել է Խաչիկ վարդապետ Դադեանը (Յ. Թովմեան, *Յուցակ Ձեռագրաց Դադեան Խաչիկ Վարդապետի, Մասն Ա.*, Վաղարշապատ, Տպ. Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի, 1898, էջ 102): Այս խորագրով է երկը ներկայացում նաև ՄՄ ցուցակում (*Յուցակ Ձեռագրաց Մաշտոցի Անուան Մատենադարանի, Հտր. Ա*, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ. 1965, էջ 1120): Բնագիրը ընդարձակ առաջաբանով հրատարակել է Մաղալեանը (Ա. Մաղալեան, «Առաքել Կոստանեանցի «Պատմութիւն Գոչայ Վանուց» Աշխատութիւնը», *Բանբեր Մատենադարանի, Թ. 18*, Երևան, «Գիտութիւն» Հրատ., 2008, էջ 283-304):
- ²⁶ Նոյն, 1ա:
- ²⁷ ՄՄ, ձեռ. 3966, թղ. 2ա:
- ²⁸ ՄՄ, Կաթողիկոսական դիւան, թղթ. 182, վա. 449:
- ²⁹ Նոյն, թղ.6ա: Մելիք Եգանեանների մասին աւելի մանրամասն տե՛ս՝ Լէօ, *Երկերի Ժողովածու, Հտր. 3, Գիրք 2*, Երևան, Հայաստան Հրատ., 1973, էջ 364:
- ³⁰ ՄՄ ձեռ. 3881, թերթ՝ 195, նիւթ՝ թուղթ, 18x11,5, գիր՝ նոտրգիր, տող՝ 20:
- ³¹ ՄՄ ձեռ. 7571, թերթ՝ 186, նիւթ՝ թուղթ, 23,5x19,5, գիր՝ բոլորգիր, տող՝ 25:
- ³² Օ. Եգանեան, «Կարուսասարայի (Իջեանի) Սբ. Ամենափրկիչ Եկեղեցու Ձեռագրերի Հաւաքածուն», *Էջմիածին*, 1971, ԺԲ, էջ 43:
- ³³ ՄՄ ձեռ. 3580, թերթ՝ 174, նիւթ՝ թուղթ, 19x14,5, գիր՝ բոլորգիր, տող՝ 24:
- ³⁴ Նոյն, թղ. 28ա, թղ. 107ա եւ այլուր:
- ³⁵ Նոյն, թղ. 107աբ:
- ³⁶ Նոյն, թղ.111բ-112ա:
- ³⁷ Նոյն, էջ 108ա:
- ³⁸ Նոյն, էջ 171բ:
- ³⁹ ՄՄ, ձեռ. 5380, էջ 182բ:
- ⁴⁰ ՄՄ 5380, թերթ՝ 182, նիւթ՝ թուղթ, 22x15, գիր՝ բոլորգիր, տող՝ 20:
- ⁴¹ Յ. Թովմեան, *Յուցակ Ձեռագրաց Դադեան Խաչիկ Վարդապետի, Մասն Բ*, Վաղարշապատ, Տպ.Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի, 1900, էջ 46:
- ⁴² Նոյն, էջ 46. հմմտ.՝ Ձեռ.5830, էջ182բ:
- ⁴³ Բարխուդարեանց, *Արցախ*, էջ 143:
- ⁴⁴ Թորգոմ Արք. Գուշակեան, «Յուցակ Հայերէն Ձեռագրաց Սբ. Նշանի Վանուց Սեբաստիա», *Հանդէս Ամսօրեայ*, Վիեննա, Մխիթարեան Տպարան, 1925, էջ 476:
- ⁴⁵ Բարխուդարեանց, *Արցախ*, էջ 69:
- ⁴⁶ Թովմեան, *Յուցակ Ձեռագրաց, Մասն Ա.*, էջ 50:
- ⁴⁷ ՄՄ 2464, թերթ՝ 296, նիւթ՝ թուղթ, 12x9,2, գիր՝ բոլորգիր, տող՝ 22:
- ⁴⁸ Նոյն, էջ 179ա:
- ⁴⁹ Նոյն:
- ⁵⁰ Ս. Տէր-Աւետիսեան, *Յուցակ Ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ Վանքի, Ա.*, Վիեննա, Մխիթարեան Տպարան, 1970, էջ 127:
- ⁵¹ Թովմեան, *Յուցակ Ձեռագրաց, Մասն Ա.*, էջ 89:

-
- ⁵² Մ. Բարխուդարեանց, *Պատմութիւն Աղուանից, Հտր. Բ.*, Թիֆլիս, Տպ. Օր. Ն. Աղանեանցի, 1907, էջ 21:
- ⁵³ Մ. Վրդ. Քեշիշեան, *Յուցակ Հայերէն Ձեռագրաց Զմնատի Վանքի Մատենադարանին*, Վիեննա, Մխիթարեան Տպարան, 1964, էջ 37:
- ⁵⁴ *Դիւան Հայ Վիմագրութեան, Պրակ V, Արցախ*, Երևան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1982, էջ 181:
- ⁵⁵ Ոսկեան, էջ 20:
- ⁵⁶ Խաչիկեան, *ԺԵ Դարի Հայերէն, Հտր. Ա.*, էջ 382-83:
- ⁵⁷ Մեսրոպ վրդ. Մաքսուդեան, «Ազուլիսի Եւ Շրջակայքի Ձեռագրերը», *Արարատ*, 1911, էջ 567:
- ⁵⁸ Նոյն, էջ 567:

THE MANUSCRIPTS OF GTICH VANK AND DIZAK DISTRICT
(SUMMARY)

TAMARA MINASYAN
minasyan.tamara64@mail.ru

The historical district of Dizak in the southern part of the Mus Haband province of Artsakh was formed at the end of the 16th century. Its eastern borders reached the plane of Mughan, in the north the left bank of the Keondalan River, in the west the Kirs mountain chain and the heights along the River Yeraskh, and in the south the Yeraskh River. The district corresponds to the historical territory which Movses Khorenatsi named Parzkank (Bazkank, Pantzkank in manuscripts, and later renamed Jabrayel).

The Gtich Vank monastery, located at the center of the district, was founded in the early Middle Ages and in the 15th century had become a renowned cultural center with its scriptorium. Nevertheless, we know very little about the monastery's manuscript production, as most manuscripts were lost during ravages and pillages.

Basing her work on the information gathered from various manuscript catalogues pertaining to this province, the author gives a full picture of the manuscript production of the District of Dizak, categorizing the manuscripts as *Gospels*, *Mashtotses*, Ritual books and Hymnals.

The author has been able to list a total of 22 manuscripts of diverse contents which come from the Gtich Vank monastery and the province of Dizak. The information collected from the colophons of these manuscripts enables us to conclude that the monastery of Gtich Vank was the main location where manuscripts were written, illuminated and kept. There were, however, other less important locations too in the district, like Taghaser, Shakhkakh, Dizapayt, Togh and Taghlar villages.